ՀՆԱԳՈՒՅՆ ԱԶԳԵՐԻ ՀԵՐՈՍԱԿԱՆ ԷՋԵՐԸ



ՖԻՐԴՈՒՍԻ
(մոտ 940–1020)

Ֆիրդուսին պարսիկ նշանավոր բանաստեղծ է, հռչակավոր «Շահնամե»-ի հեղինակը: Ֆիրդուսու ծննդյան թիվը որոշելու համար հիմք են հանդիսացել բանաստեղծի տվյալները: «Շահնամե»-ի մեջ զանազան տեղերում հեղինակը խոսում է իր տարիքի մասին: Բայց հետագայում, այլևայլ տվյալներ համեմատելով, Ֆիրդուսու ծննդյան թվականը համարեցին 934 (ապա՝ 940) թվականը: 1934 թ. Իրանում նշվեց բանաստեղծի 1000-ամյա հոբելյանը: Հետագայում այս տարեթիվն էլ կասկածելի համարվեց, և ընդունվեցին տարբեր կարծիքներ:

Մանկության մասին ոչինչ հայտնի չէ: Ժամանակակիցները վկայում են, որ մանուկ հասակում եղել է ժրաջան ու համեստ երեխա: Հայրը եղել է կիրթ մարդ և տղային լավ դաստիարակություն է տվել: